ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-18/1-1»

ք. Վեդի «22» փետրվարի 2018թ.

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սամնան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **435605 (չորս հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր հինգ)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սու

պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիր

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «Վեդու ծննդատուն» ՓԲԸ | «Սամնան» ՍՊԸ |
| ք.Վեդի, Գայի 1 | ՀՀ, ք. Երևան,Հաղրթյան 8/10 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ, Վեդի մ/ճ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ |
| ՀՀ 247763031777 | Հ/Հ 163218023543 |
| ՀՎՀՀ 04104551 | ՀՎՀՀ 01272957 |
| Տնօրեն Վ. Մաթևոսյան | Տնօրեն՝ Մ. Հայրապետյան |
| ______________ (ստորագրություն) | ______________ (ստորագրություն) |
| | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«22» փետրվարի 2018 թ. կնքված
ՎՁ-ԳՀԱՇՁԲ-18/1-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական նկարագրություն | | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | անվանումը | բնութագիրը | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 22820000 | ուղեգիր N8 | A5, խտությունը 80գ/ք.մ, մեկկողմանի օֆսեթային սև սպիտակ, սպիտակությունը 98%, | հատ | 3 | 900 | 300 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 3 | 22820000 | ախտահիյուսվածքաբանական ուղեգիր | A4, խտությունը 80գ/ք.մ, երկկողմանի օֆսեթային սև սպիտակ, սպիտակությունը 98%, | հատ | 5 | 1500 | 300 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 4 | 22820000 | էլեկտրոսրտագրության ձևաթուղթ | A5, խտությունը, 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային, սպիտակությունը 98%, | հատ | 3 | 900 | 300 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 5 | 22820000 | Նորածնի վարման քարտ | Բժշկական փաստաթղթեր, հավելված 4, ՀՀ ԱՆ 2014թ. փետրվարի 14-ի N 02-Ն հրամանի, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, | հատ | 45 | 45000 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 6 | 22820000 | Փոխանակման քարտ հղիի N 113 ձև, ձևաթուղթ , երկկողմանի | A3 (3 x A5) խտությունը 80գ/ք.մ երկկողմանի օֆսեթային սպիտակությունը 98%., | հատ | 60 | 60000 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 7 | 22820000 | Բժշկական խմունակենսաբանական պատրաստուկների պլանավորման հայտ | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 6 | 900 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 22820000 | Հղիության ընդհատման պատմություն | A4, խտությունը 80գ/ք.մ, երկկողմանի օֆսեթային սև սպիտակ, սպիտակությունը 98%, | հատ | 60 | 3000 | 50 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 9 | 22820000 | Ուղեգիր ՄԻԱԿ-ի A 4 | Թուղթը՝ A4 , խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, միակողմանի | հատ | 5 | 1000 | 200 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 10 | 22820000 | Արյան բիոքիմիական քննության ձևաթուղթ | A5, խտությունը 80գ/ք.մ , միակողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 2.5 | 7500 | 3000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 11 | 22820000 | Ուղեգիր N 7 | հավելված N7 ՀՀ ԱՆ 13.09.2013թ. N 47-Ն հրամանի A 4, միակողմանի, սպիտակությունը 98%, խտությունը 80 գ/մ2 | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 12 | 22820000 | Ուլտրաձայնային հետազոտություն 1 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%,մեկկողմանի | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 13 | 22820000 | Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր | A3, ՀՀ կառավարության 25.08.2005թ. 1471-Ն որոշման հավելված 2-ին համապատասխան: Երկկողմանի, սև սպիտակ, | հատ | 25 | 1250 | 50 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 14 | 22820000 | Մեմորիալ օրդեր (փոքր) | A5, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 3 | 300 | 100 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 15 | 22820000 | Վիրահատության նկարագրություն | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%,մեկկողմանի | հատ | 5 | 1500 | 300 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 16 | 22820000 | Ուլտրաձայնային հետազոտություն 2 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, միակողմանի | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 22820000 | Քուկի թերթիկներ | A6, խտությունը, 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային, սպիտակությունը 98%, | հատ | 2 | 6000 | 3000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 18 | 22820000 | Նշանակման թերթիկ | A4, խտությունը 80գ/ք.մ, երկկողմանի օֆսեթային, սպիտակությունը 98%, | հատ | 4.5 | 13500 | 3000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 19 | 22820000 | Հեպատիտ Բ պատվաստումներ ստանալու ցուցակ | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 4.5 | 675 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 20 | 22820000 | Հաշվետվության ձև N 001 A 4 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, երկողմանի, սպիտակությունը 98%, | հատ | 4.5 | 7650 | 1700 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 21 | 22820000 | Ծնունդների տվյալների ցուցակ | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 5 | 750 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 22 | 22820000 | Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթ | Թուղթը՝ A5 օֆսեթ, խտությունը 70 գ/մ2, սպիտակությունը 98%, երկողմանի | հատ | 4 | 200 | 50 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 23 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 1 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, միակողմանի | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 24 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 2 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, միակողմանի | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 26 | 22820000 | Մեւմորիալ օրդեր (մեծ) | A3, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 25 | 1250 | 50 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 22820000 | Ձև N Պ-1/h Ձև N Պ-1/h (ամսական, տարեկան) Համաձայնեցված՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թ. դեկտեմբերի 25-ի N 37-Ա որոշմամբ | A4, խտությունը 80գ/ք.մ, երկողմանի, օֆսեթային և սպիտակ | հատ | 5 | 750 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 29 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 3 | Թուղթը՝ A4 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, միակողմանի | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 31 | 22820000 | Ուղեգիր N 6 | հավելված N6 ՀՀ ԱՆ 13.09.2013թ.N 47-Ն հրամանի A 5, սպիտակությունը 98%, խտությունը 80 գ/մ2 | հատ | 2.2 | 22000 | 10000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 32 | 22820000 | Մուտքի դրամարկղի օրդեր | A5, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 2.2 | 1100 | 500 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 34 | 22820000 | Արյան ընդհանուր անալիզի ձևաթուղթ | A5, խտությունը 80գ/ք.մ, երկկողմանի օֆսեթային, սպիտակությունը 98%, | հատ | 2.2 | 15400 | 7000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 35 | 22820000 | Քարտ տիպային | A4 խտությունը 180գ/ք.մ, կավճային, երկուերեսանի սպիտակությունը 98%, | հատ | 6 | 480 | 80 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 36 | 22820000 | Ձև N Պ-2 Հավելված 2 ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. նոյեմբերի 9-ի N 19-Ն հրամանի | A4, խտությունը 80գ/ք.մ, երկողմանի, օֆսեթային և սպիտակ | հատ | 5 | 750 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 37 | 22820000 | Չպատվաստված կամ թերի պատվաստված երեխաների անվանական ցուցակ | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 5 | 750 | 150 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 38 | 22820000 | Համավճարի պայմանագիր | Բժշկական փաստաթղթեր, հավելված 3, ՀՀ ԱՆ 2011թ. փետրվարի 4-ի N 128-Ա հրամանի, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, | հատ | 25 | 5000 | 200 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 39 | 22820000 | Հղիության արհեստական ընդհատման նպատակով հղի կնոջ կողմից ներկայացվող դիմում Ձև 1 | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային և սպիտակ | հատ | 5 | 1000 | 200 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 40 | 22820000 | Պտղի սրտի գերձայնային հետազոտություն | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 41 | 22820000 | Վճարման հանձնարարական, կրկնօրինակով | A5, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային, կրկնօրինակով | հատ | 25 | 12500 | 500 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 42 | 22820000 | Մեզի ընդհանուր անալիզի ձևաթուղթ | A5, խտությունը 80գ/ք.մ, երկկողմանի օֆսեթային, սպիտակությունը 98%, | հատ | 2.2 | 15400 | 7000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 43 | 22820000 | Ձևաթուղթ՝ արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտության | A4, խտությունը 80գ/ք.մ ,երկկողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 44 | 22820000 | Հղիի ծննդատան պայուսակ | A5, խտությունը 80գ/ք.մ ,երկկողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 2.3 | 2300 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 45 | 22820000 | Հղիի ամենօրյա սննդակարգ | A5, խտությունը 80գ/ք.մ ,երկկողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 2.3 | 2300 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 46 | 22820000 | Հայփոստ ՊՓԲԸ հանձնված նամակների ցուցակ | A4, խտությունը 80գ/ք.մ, միակողմանի օֆսեթային սև սպիտակ | հատ | 4.5 | 4500 | 1000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 47 | 22820000 | Վիճակագրական քարտ հ/պ, ձև N-066/ու A 5 | Թուղթը՝ հ/պ, ձև N-066/ու , A5 օֆսեթ, խտությունը 80 գ/մ2, սպիտակությունը 98%, երկկողմանի | հատ | 2.3 | 4600 | 2000 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 48 | 22110000 | Հղիներին տրամադրվող ծննդօգնության պետական հավաստագրերի գրանցամատյան | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ | հատ | 2300 | 2300 | 1 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 49 | 22110000 | Հիվանդի շարժի գիրք | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ: | հատ | 2300 | 4600 | 2 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 50 | 22110000 | Ընդունարանի գիրք 200 թերթ | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ: | հատ | 2300 | 4600 | 2 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 51 | 22110000 | Գիրք բանակազումարային | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 100 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ | հատ | 1500 | 15000 | 10 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 52 | 22810000 | գրանցամատյաններ 1 | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 100 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ | հատ | 1500 | 7500 | 5 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 53 | 22810000 | գրանցամատյաններ 2 | Ստվարաթղթե կազմով, գրքի թերթերի չափը A4 ֆորմատի 200 թերթից, խտությունը՝ 80գ/քմ, երկկողմանի տպագրությամբ | հատ | 2300 | 23000 | 10 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| 54 | 22111100 | ուսուցողական գրքեր | **Հատոր 1**-Ուլտրաձայնային ախտորոշում մանկաբարձության և գինեկոլոգիայի բնագավառում (մանկաբարձություն) Հեղինակ-Էբերխարդ Մերզ, Մոսկվա, медпрес-информ,2011<br>**Հատոր 2**-Ուլտրաձայնային ախտորոշում գինեկոլոգիայում Հեղինակ-Էբերխարդ Մերզ, Մոսկվա, медпрес-информ,2011 | հատ | 50000 | 100000 | 2 | ք.Վեդի, Գայի 1 | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | *** | *** | *** | 435605 | *** | *** | *** |

**ԳՆՈՐԴ**
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 247763031777
ՀՎՀՀ 04104551
տնօրեն Վ. Մաթևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Սամնան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան,Հասրաթյան 8/10
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218023543
ՀՎՀՀ 01272957
Տնօրեն Մ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«22» փետրվարի 2018թ. կնքված
N ՎԾ-ԳՀԱԾՁԲ-18/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ

| հրավերով նախատեսված չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանում | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | 22820000 | ուղեգիր N8 | 0 | 0 | 90 | 180 | 270 | 360 | 450 | 540 | 630 | 720 | 810 | 900 | 900 |
| 3 | 22820000 | ախտահյուսվածքաբանական ուղեգիր | 0 | 0 | 150 | 300 | 450 | 600 | 750 | 900 | 1050 | 1200 | 1350 | 1500 | 1500 |
| 4 | 22820000 | էլեկտրոսրտագրության ձևաթուղթ | 0 | 0 | 90 | 180 | 270 | 360 | 450 | 540 | 630 | 720 | 810 | 900 | 900 |
| 5 | 22820000 | Նորածնի վարման քարտ | 0 | 0 | 4500 | 9000 | 13500 | 18000 | 22500 | 27000 | 31500 | 36000 | 40500 | 45000 | 45000 |
| 6 | 22820000 | Փոխանակման քարտ հղիի N 113 ձև, ձևաթուղթ , [illegible] | 0 | 0 | 6000 | 12000 | 18000 | 24000 | 30000 | 36000 | 42000 | 48000 | 54000 | 60000 | 60000 |
| 7 | 22820000 | Բժշկական իմունա կենսաբանական պատրաստուկների պլանավորման հայտ | 0 | 0 | 90 | 180 | 270 | 360 | 450 | 540 | 630 | 720 | 810 | 900 | 900 |
| 8 | 22820000 | Հղիության ընդհատման պատմություն | 0 | 0 | 300 | 600 | 900 | 1200 | 1500 | 1800 | 2100 | 2400 | 2700 | 3000 | 3000 |
| 9 | 22820000 | Ուղեգիր ՄԻԱՎ-ի A 4 | 0 | 0 | 100 | 200 | 300 | 400 | 500 | 600 | 700 | 800 | 900 | 1000 | 1000 |
| 10 | 22820000 | Արյան բիոքիմիական քննության ձևաթուղթ | 0 | 0 | 750 | 1500 | 2250 | 3000 | 3750 | 4500 | 5250 | 6000 | 6750 | 7500 | 7500 |
| 11 | 22820000 | Ուղեգիր N 7 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 12 | 22820000 | Ուլտրաձայնային հետազոտություն 1 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 13 | 22820000 | Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր | 0 | 0 | 125 | 250 | 375 | 500 | 625 | 750 | 875 | 1000 | 1125 | 1250 | 1250 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 22820000 | Մեմորիալ օրդեր (փոքր) | 0 | 0 | 30 | 60 | 90 | 120 | 150 | 180 | 210 | 240 | 270 | 300 | 300 |
| 15 | 22820000 | Վիրահատության նկարագրություն | 0 | 0 | 150 | 300 | 450 | 600 | 750 | 900 | 1050 | 1200 | 1350 | 1500 | 1500 |
| 16 | 22820000 | Ուլտրաձայնային հետազոտություն 2 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 17 | 22820000 | Քունկի թերթիկներ | 0 | 0 | 600 | 1200 | 1800 | 2400 | 3000 | 3600 | 4200 | 4800 | 5400 | 6000 | 6000 |
| 18 | 22820000 | Նշանակման թերթիկ | 0 | 0 | 1350 | 2700 | 4050 | 5400 | 6750 | 8100 | 9450 | 10800 | 12150 | 13500 | 13500 |
| 19 | 22820000 | Հեպատիտ B պատվաստումներ ստանալու ցուցակ | 0 | 0 | 67.5 | 135 | 202.5 | 270 | 337.5 | 405 | 472.5 | 540 | 607.5 | 675 | 675 |
| 20 | 22820000 | Հաշվետվության ձև N 001 A 4 | 0 | 0 | 765 | 1530 | 2295 | 3060 | 3825 | 4590 | 5355 | 6120 | 6885 | 7650 | 7650 |
| 21 | 22820000 | Ծնունդների տվյալների ցուցակ | 0 | 0 | 75 | 150 | 225 | 300 | 375 | 450 | 525 | 600 | 675 | 750 | 750 |
| 22 | 22820000 | Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթ | 0 | 0 | 20 | 40 | 60 | 80 | 100 | 120 | 140 | 160 | 180 | 200 | 200 |
| 23 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 1 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 24 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 2 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 26 | 22820000 | Մեմորիալ օրդեր (մեծ) | 0 | 0 | 125 | 250 | 375 | 500 | 625 | 750 | 875 | 1000 | 1125 | 1250 | 1250 |
| 28 | 22820000 | Ձև N Պ-1/հ Ձև N Պ-1/հ (ամսական, տարեկան) Համաձայնեցված՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թ. դեկտեմբերի 25-ի N 37-Ա որոշմամբ | 0 | 0 | 75 | 150 | 225 | 300 | 375 | 450 | 525 | 600 | 675 | 750 | 750 |
| 29 | 22820000 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N 3 | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | 22820000 | Ուղեգիր N 6 | 0 | 0 | 2200 | 4400 | 6600 | 8800 | 11000 | 13200 | 15400 | 17600 | 19800 | 22000 | 22000 |
| 32 | 22820000 | Մուտքի դրամարկղի օրդեր | 0 | 0 | 110 | 220 | 330 | 440 | 550 | 660 | 770 | 880 | 990 | 1100 | 1100 |
| 34 | 22820000 | Արյան ընդհանուր անալիզի ձևաթուղթ | 0 | 0 | 1540 | 3080 | 4620 | 6160 | 7700 | 9240 | 10780 | 12320 | 13860 | 15400 | 15400 |
| 35 | 22820000 | Քարտ տիպային | 0 | 0 | 48 | 96 | 144 | 192 | 240 | 288 | 336 | 384 | 432 | 480 | 480 |
| 36 | 22820000 | Ձև N Պ-2 Հավելված 2 ՀՀ առողջապահու թյան նախարարի 2012 թ. նոյեմբերի 9-ի N 19-Ն հրամանի | 0 | 0 | 75 | 150 | 225 | 300 | 375 | 450 | 525 | 600 | 675 | 750 | 750 |
| 37 | 22820000 | Չպատվաստված կամ թերի պատ - վաստված երեխա-ների անվանական ցուցակ | 0 | 0 | 75 | 150 | 225 | 300 | 375 | 450 | 525 | 600 | 675 | 750 | 750 |
| 38 | 22820000 | Համաձայնության պայմանագիր | 0 | 0 | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 3000 | 3500 | 4000 | 4500 | 5000 | 5000 |
| 39 | 22820000 | Հղիության արհեստական ընդհատման նպատակով հղի կնոջ կողմից ներկայացվող դիմում Ձև 1 | 0 | 0 | 100 | 200 | 300 | 400 | 500 | 600 | 700 | 800 | 900 | 1000 | 1000 |
| 40 | 22820000 | Պտղի սրտի գերձայնային հետազոտություն | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 41 | 22820000 | Վճարման հանձնարարական, կրկնօրինակով | 0 | 0 | 1250 | 2500 | 3750 | 5000 | 6250 | 7500 | 8750 | 10000 | 11250 | 12500 | 12500 |
| 42 | 22820000 | Մեզի ընդհանուր անալիզի ձևաթուղթ | 0 | 0 | 1540 | 3080 | 4620 | 6160 | 7700 | 9240 | 10780 | 12320 | 13860 | 15400 | 15400 |
| 43 | 22820000 | Ձևաթուղթ արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտության | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 44 | 22820000 | Հղիի ծննդատան պայուսակ | 0 | 0 | 230 | 460 | 690 | 920 | 1150 | 1380 | 1610 | 1840 | 2070 | 2300 | 2300 |
| 45 | 22820000 | Հղիի ամենօրյա անհրաժեշտ | 0 | 0 | 230 | 460 | 690 | 920 | 1150 | 1380 | 1610 | 1840 | 2070 | 2300 | 2300 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | 22820000 | Հայփոստ ՊՓԲԸ հանձնված նամակների ցուցակ | 0 | 0 | 450 | 900 | 1350 | 1800 | 2250 | 2700 | 3150 | 3600 | 4050 | 4500 | 4500 |
| 47 | 22820000 | Վիճակագրական քարտ հ/պ. ձև N-066/ու A 5 | 0 | 0 | 460 | 920 | 1380 | 1840 | 2300 | 2760 | 3220 | 3680 | 4140 | 4600 | 4600 |
| 48 | 22110000 | Հղիներին տրամադրվող ծննդօգնության պետական հավաստագրերի գրանցամատյան | 0 | 0 | 230 | 460 | 690 | 920 | 1150 | 1380 | 1610 | 1840 | 2070 | 2300 | 2300 |
| 49 | 22110000 | Հիվանդի շարժի գիրք | 0 | 0 | 460 | 920 | 1380 | 1840 | 2300 | 2760 | 3220 | 3680 | 4140 | 4600 | 4600 |
| 50 | 22110000 | Ընդունարանի գիրք 200 թերթ | 0 | 0 | 460 | 920 | 1380 | 1840 | 2300 | 2760 | 3220 | 3680 | 4140 | 4600 | 4600 |
| 51 | 22110000 | Գիրք բանակագումարային | 0 | 0 | 1500 | 3000 | 4500 | 6000 | 7500 | 9000 | 10500 | 12000 | 13500 | 15000 | 15000 |
| 52 | 22810000 | գրանցամատյաններ 1 | 0 | 0 | 750 | 1500 | 2250 | 3000 | 3750 | 4500 | 5250 | 6000 | 6750 | 7500 | 7500 |
| 53 | 22810000 | գրանցամատյաններ 2 | 0 | 0 | 2300 | 4600 | 6900 | 9200 | 11500 | 13800 | 16100 | 18400 | 20700 | 23000 | 23000 |
| 54 | 22111100 | ուսուցողական գրքեր | 0 | 0 | 10000 | 20000 | 30000 | 40000 | 50000 | 60000 | 70000 | 80000 | 90000 | 100000 | 100000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 0 | 0 | 43560.5 | 87121 | 130681.5 | 174242 | 217802.5 | 261363 | 304923.5 | 348484 | 392044.5 | 435605 | 435605 |

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 247763031777
ՀՎՀՀ 04104551
տնօրեն Վ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սամնան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան,Հաարաթյան 8/10
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218023543
ՀՎՀՀ 01272957
Տնօրեն Մ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 22 » փետրվարի 20 18 թ. կնքված
N «ՎԾ-ԳՀԱՇՁԲ—18/1-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Սամնան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան,Հասրաթյան 8/10
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218023543
ՀՎՀՀ 01272957

Պատվիրատու
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
գտնվելու վայրը՝ ք.վեդի, Գայի 1
հհ 247763031777
ԱԾԻԲ, Վեդի մ/ճ
Հվհհ 04104551

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 22 » «փետրվարի» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ «ՎԾ-ԳՀԱՇՁԲ—18/1-1»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | կատարման ժամկետը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | կատարման ժամկետը: փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն

Աշխատանքը ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 22 » փետրվարի 20 18 թ. կնքված
N «ՎԾ-ԳՀԱՇՁԲ—18/1-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ **«Վեդու ծննդատուն» ՓԲԸ** -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՍԱՄՆԱՆ ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ՎԾ-ԳՀԱՇՁԲ—18/1-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն
____________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն
____________________
ստորագրություն